ԿԱՐԾԻՔ

Ժ.01.06- «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Արման Ալեքսանդրի Սաֆարյանի «Ժամանակակից մուլտիմեդիային հարթակների զարգացման միտումները և հեռանկարները (ՀՀ և ՌԴ ԶԼՄ-ների օրինակով)» ատենախոսության մասին

Արման Ալեքսանդրի Սաֆարյանի ատենախոսությունը նվիրված է կոնվերգենտ լրագրության ու մուլտիմեդիային հարթակների (ռուսաստանյան և հայաստանյան ԶԼՄ-ների օրինակով) զարգացման միտումների ու հեռանկարների բացահայտման հիմնահարցերի լուսաբանմանը: Այս իմաստով Արման Սաֆարյանի հետազոտության թեման խիստ արդիական է և հետաքրքիր, քանզի մուլտիմեդիային լրագրության կայացման տեսական հիմնահարցերը բավարար չեն ուսումնասիրված նաև ռուսաստանյան և արևմտյան իրականության մեջ:

Հեղինակը կատարել է մուլտիմեդիային լրագրության համալիր ուսումնասիրություն, ներկայացրել ժամանակակից լրագրության միտումները և բացահայտել մուլտիմեդիային հարթակների յուրահատուկ հնարավորությունները՝ լրագրողական արտադրանքի տարածման և հայաստանյան ԶԼՄ-ների հետագա զարգացման ու նրանց մրցունակության բարձրացման առումով: Աշխատանքն ունի նաև կիրառական նշանակություն, նպատակաուղղված է հայաստանյան ու ռուսաստանյան ԶԼՄ-ների գործունեության գնահատման կոնկրետ առաջարկների մշակմանը, դրանց մրցունակության բարձրացմանը:

Հեղինակն իրականացրել է հայաստանյան ԶԼՄ-ների՝ համացանցում ներգրավածության ցուցանիշների էմպիրիկ-համեմատական ուսումնասիրություն և վերլուծություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վեց ենթագլխից, վերջաբանից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ներածական մասը հիմնավորված շարադրանք է թեմայի

արդիականության, ուսումնասիրության առարկայի խնդիրների և նպատակի վերաբերյալ:

Ատենախոսության առաջին գլխի («Մուլտիմեդիային լրագրության առանձնահատկությունները և հիմնախնդիրները») առաջին ենթագլխում քննության են ենթարկվում Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում մուլտիմեդիային լրագրության ձևավորման փուլերը և պատմանակ նախատիպերը: Նույն գլխի երկրորդ ենթագլխում դիտարկվում են ինչպես լրագրության (իբրև բազմաշերտ ոլորտի) գործառութային փոխակերպումները, այնպես էլ փոփոխությունները լրագրողի պրակտիկ գործունեության մեջ:

«Ռուսաստանյան և հայաստանյան կոնվերգենտ ու մուլտիմեդիային լրագրության զարգացման առանձնահատկությունները» վերնագրված երկրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացված է ավանդական լրագրության նյութերի ժանրային դասակարգման որոշ գերակայող մոտեցումների համառոտ տեսությունը՝ մուլտիմեդիային իրողության տիպաբանության հետագա քննության նպատակով: Այս ենթագլխում դիտարկվել են Հայաստանի և Ռուսաստանի ՁԼՄ-ների օրինակներ, քննության են առնվել մուլտիմեդիային լրագրության տարբեր ձևաչափեր:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում վերլուծության են ենթարկվել հետազոտության արդյունքում ստացված տվյալներ, որոնք բացահայտում են հայաստանյան և ռուսաստանյան ՁԼՄ-ների՝ համացանցում ներգրավածությունը:

Երրորդ գլխի («Մուլտիմեդիային լրագրության մեջ թեմատիկ ձևափոխումների առանձնահատկությունները») առաջին ենթագլխում ներկայացված են հայ հրապարակախոսության մեջ բնապահպանական հիմնահարցերի լուսաբանման օրինակներ, ուրվագծված է արդիական խնդիրների լուծման գործընթացում պատմական փորձի և ազգային-մշակութային հարուստ ժառանգության օգտագործման հնարավորությունը:

Նույն գլխի երկրորդ ենթագլխում վերլուծվել են որոշ վիճահարույց թեմաներ՝ ժամանակակից ՁԼՄ-ների լուսաբանման համատեքստում:

Արժեքավոր են հատկապես ատենախոսության վերջին՝ «Եզրակացություններ» և «Առաջարկություններ» բաժինները, որտեղ հեղինակն

ամփոփում է հայաստանյան առցանց ԶԼՄ-ների մուլտիմեդիային նկրտումները և գործնական առաջարկներ ներկայացնում դրանց համապարփակ զարգացման ուղղությամբ: Ատենախոսի բոլոր եզրակացությունները հիմնավորվում են ԶԼՄ-ներից և համացանցից բերված բազմաթիվ և դիպուկ օրինակներով, որոնք նրա եզրակացությունները դարձնում են առարկայական ու ճշմարտացի:

Ոչ միայն որպես ընդդիմախոս, այլև որպես մուլտիմեդիային լրատվամիջոցի ղեկավար կարող եմ փաստել, որ Արման Սաֆարյանի ատենախոսությունը լրագրության ասպարեզում վերջին տասնամյակի զարգացումների ճշգրիտ և հավաստի արտացոլանք է: Հիմնվելով փաստերի և իր սեփական վերլուծության վրա՝ հեղինակը նաև փորձել է որոշ կանխատեսումներ կատարել ապագայի լրագրության վերաբերյալ, ինչն աշխատանքն էլ ավելի արժեքավոր է դարձնում:

Ատենախոսությունը գործնական և կիրառական արժեք ունի լրագրողների, մեդիա տեսաբանների ու լրագրության ֆակուլտետների ուսանողների համար: Այն գոհացնում է նաև հեղինակի առջև դրված խնդիրների լուծման տեսակետից: Ատենախոսության ամբողջ ընթացքը հենվում է համապատասխան գրականության և փաստաթղթերի, տեսական ու փաստական գոհացուցիչ հենքի վրա: Ատենախոսի հրատարակած հոդվածները լիովին արտացոլում են ներկայացված աշխատության դրույթները:

Աշխատանքն ունի նաև որոշ թերութուններ, որպիսիք են.

1. աշխատանքում ամբողջական չի ներկայացված սոցիալական ցանցերի ազդեցությունը մուլտիմեդիային լրագրության վրա, մասնավորապես՝ ինֆլյուենսերների (կամ այսպես կոչված բլոգերների և ֆեյսբուքյան ակտիվիստների) հրապարակումների հանրայնացումը ԶԼՄ-ներում և դրանցով հանրային դիսկուրսի ձևավորումը: Մինչդեռ հետաքրքիր կլիներ տեսնել, թե ինչպես է հեղինակը պատկերացնում սոցիալական և ավանդական մեդիաների փոխազդեցության, փոխկապակցվածության և կախվածության խնդրի լուծումը:

2. ատենախոսության մեջ լիարժեք չեն ներկայացված մուլտիմեդիային այլընտրանքային նախագծերը, որոնք գործում են բացառապես համացանցում, այդ թվում՝ YouTube-ում կամ Facebook-ում և ունեն ավելի մեծ ժողովրդավարություն, քան

ավանդական մի շարք ԶԼՄ-ներ: Օրինակ, Ռուսաստանում նման հարթակներից մեկն է «ВДудь» յութուբյան ալիքը, իսկ Հայաստանում՝ «ArmComedy»-ն:

Ասվածը բնավ չի նվազեցնում լիուլի հաջողված այս լուրջ և ծանրակշիռ գիտական աշխատանքի արժեքը: Այն անվիճելիորեն բավարարում է թեկնածուական ատենախոսությանն առաջադրվող պահանջները, ուստի միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈԿ-ի 012 մասնագիտական խորհրդի առջև՝ Արման Ալեքսանդրի Սաֆարյանին շնորհելու իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ **Դավիթ Հրայրի Ալավերդյան**
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
«24» հունիսի, 2022թ.

բ.գ.թ., դոցենտ Դ.Հ. Ալավերդյանի տորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար՝ **Մերի Վազգենի Հովհաննիսյան**